

# Խորհրդածութիւններ հարցազրոյցի մը առթիւ «ՎՖԸՄ-ի նիւթական վիճակը աւելի լաւ է, քան երբեւէ»

Գրեց. Դոկտ. Նուրէլ Պելլերեան

«Կը փափաքիմ որ Մելքոնեան կրթական այս  
հաստատութիւնները տեւեն դարէ դար...»  
Կարապետ Մելգոնեան

Նոյեմբեր 15, 2004-ի թիով Ապագայ կ'արտատպէր Հայաստանի Ազգ օրաթերթի թղթակիցին հարցազրոյցը ՎՖԸՄի կեդրոնական վարչութեան փոխ-նախագահ Դոկտ. Արշալիր Կէօնճեանի հետ, ուր Դոկտ. Կէօնճեան կ'արտասանէր խորագրին մէջ չակերտուած իր շատ նշանակալից խօսքը:

Մեզի խորունկ հրճուանք պատճառեց այդ հաւաստիացումը, երկու գլխաւոր պատճառներով:

Նախ, որովհետեւ անցեալ տարուայ ընթացքին ՎՖԸՄը ստացեր է 15 միլիոն տօլար նոր նուիրատուութիւն, որ ենթադրաբար պիտի գործածուի հայանպաստ նպատակներու: Այս առթիւ, կը յուսանք որ ՎՖԸՄը իր նուիրատուներուն համոզած է որ այդ գումարներու օգտագործման ձեւն ու եղանակը ձգուի ՎՖԸՄի, քան թէ նուիրատուին փափաքած ձեւով գործածուելու, որպէսզի օր մը, ՎՖԸՄի վարչականներ չի փորձուին նուիրատուին փափաքը ժխտելու կամ խեղաթիւրելու, կամ այլ պատրուակներ ստեղծելով այդ գումարները իրացնել փորձելու- կացութիւն մը որ մեզ կ'առաջնորդէ մեր երկրորդ պատճառին:

Հիմա որ «ՎՖԸՄի նիւթական վիճակը աւելի լաւ է քան երբեւէ,» կը խորհիմք որ ատենը եկած է որ ՎՖԸՄը պաշտօնապէս հրաժարի Մելգոնեան եղբայրներու կտակը մոխիրի վերածելու իր քանդիչ ծրագրէն:

1925-ի երակողմանի համաձայնութեամբ, կնքուած Կարապետ Մելգոնեանի, Պոլսոյ Պատրիարքարանի եւ ՎՖԸՄի միջեւ, Մելգոնեան Կրթական Հաստատութիւնը յանձնուեցաւ ՎՖԸՄի, որպէսզի վերջինս իրագործէ Մելգոնեաններու երազը:

Իսկ ի՞նչ էր այդ երազը:

Բարերար Կարապետ Մելգոնեանի իսկ բռնեցով, «Կը փափաքիմ որ Մելքոնեան կրթական այս հաստատութիւնները տեւեն դարէ դար եւ ըլլան լուսատրոյթեան վառարաններ, տալու համար Հայ Ազգին հայ Հայրենիքին եւ մարդկութեան օգտակար եւ պարկեշտ նկարագրով անդամներ:»

Որեւէ բանիմաց անձ որ կը կարդայ նուիրատուին այս խօսքերը լրիւ կը հասկնայ թէ ինչ ըսել կ'ուզէ Կ. Մելգոնեան, երբ կ'ըսէ թէ կը փափաքի որ իր հիմնած հաստատութիւնը տեւէ դարէ դար: Եւ արդէն գիտենք որ բարերարը կը թողու ժառանգ մը, որու տոկոսին փոքր մէկ բաժինը կը բաւէր մատակարարելու հաստատութիւնը:

Վերջերս այլեւս ակնյայտ դարձած էր որ ՎՖԸՄը որոշած էր արտասահմանի մէջ իր կրթական գործունէութիւնները պակսեցնել կամ բոլորովին դադրեցնել: Ուստի, ժամանակը եկած է որ ինչպէս որ 1924-ին Պոլսոյ Պատրիարքարանը ընդունեց որ ինք կարող չէր Մելգոնեանի կտակը իրագործելու եւ զայն փոխանձեց ՎՖԸՄի որպէսզի ՎՖԸՄը իրագործէ Մելգոնեանի ծրագիրը, այսօր ալ ՎՖԸՄը քաջութիւնը եւ պարկեշտութիւնը պարտի ունենալ ընդունելու որ ինք այլեւս կարող չէ Մելգոնեանի համաձայնութիւնը եւ փափաքը իրագործելու, եւ զայն յանձնէ այդ պարտականութիւնը վրան առնելու տրամադիր խնամատար մարմնի մը, ինչպէս նախատեսուած է բարերարին կողմէ, 1925-ի համաձայնութեան մէջ:

Թէեւ մեր այսօրուայ խորհրդածութեան առանցքին մէջ չիյնար, սակայն մի քանի բառով ալ անդրադառնանք Դոկտ. Կէօնճեանի կողմէ յայտնուած «բուն պատճառներուն» որոնք կը մղեն ՎՖԸՄը, քանդելու Մելգոնեանը:

- Սփիւռքահայութեան դէպի Արեւմուտք տեղափոխման պատճառաւ, Մելգոնեանը կորսնցուցեր է աշակերտներու բնական հոսքը...

Իրա՞ւ:

Այսօր, Կիպրոս լրիւ անդամ է Եւրոպական Միութեան, եւ Մելգոնեան Կրթ. Հաստատութիւնը Եւրոպական Միութեան մէջ միակ Հայկական երկրորդական վարժարանն է: Եւրոպական Միութեան զանազան երկիրներու մէջ այսօր կը բնակին կէս միլիոն Հայեր: Կրնաք ասոր վրայ անելոցնել նաեւ նոստազոյն մէկ միլիոն հայեր Ռուսիոյ եւ Ուքրայնայի մէջ, եւ քառորդ միլիոն հայեր միջին Արեւելքի զանազան երկիրներուն մէջ, ինչպէս Պուլկարիայ, Թուրքիայ, Լիբանան, Սուրիա, եւլն, մինչեւ Եթովպիա:

Ուստի, Մելգոնեանի դերը շատ անելի կարեւոր է այսօր քան անցեալին, երբ կային բազմաթիւ Հայկ. երկրորդական վարժարաններ մի քանի երկիրներու մէջ ուր հայութիւն կեդրոնացած էր. բայց այսօր կայ միայն ու միայն Մելգոնեանը, որ հայեցի դաստիարակութիւն ջամբելու կեդրոն մըն է բովանդակ Եւրոպական Միութեան մէջ, եւ կրնայ ծառայել մօտ երկու միլիոն հայութեան:

- Իբր թէ Մելգոնեանի աշակերտներու թէ՛ քանակը, թէ՛ որակը անկում կրած է...

Յստակ է որ վերջի 50 - 60 տարուայ ընթացքին Մելգոնեանի աշակերտներու թիւը եղած է 200-էն 220-ի միջեւ: ՀԲԸՄն է որ միշտ որոշած է աշակերտութեան թիւը: Նկատի ունենալով որ որեւէ լուրջ ճիգ չէ թափուած աշակերտներու թիւը անելոցնելու, հրաշքի համազօր պէտք է համարել որ Մելգոնեանը միշտ ունեցեր է 200-է անելի աշակերտ: Տարակոյս չ'ունինք որ քիչ մը աշխատանքով աշակերտութեան թիւը կարելի է 400-ի բարձրացնել:

Գալով ուսման որակի հարցին, նկատի ունենալով որ Մելգոնեանի շրջանաւարտներ յաջողութեամբ կ'անցնեն Անգլիական համալսարաններու մուտքի քննութիւնները, եւ դժուարութիւն չեն ունենար իրենց ուսումը շարունակելու ամենուրեք, ուրեմն իրաւունք չենք ունենար քննադատելու ուսման մակարդակը: Հետաքրքրական է որ այս օրերու երբ Մելգոնեանի ուսման մակարդակի մասին կը խօսուի, երկու Մելգոնեանցի սաներ բացառիկ յաջողութիւններ կ'արձանագրեն Անգլիական GCE քննութիւններու մէջ, իլելով Հասնաշխարհային չափանիշով մրցանակներ...

Ամենայն դէպս, վարժարանի մը ուսման մակարդակը կ'որոշուի իր ինամատար մարնին կողմէ. ուրեմն, եթէ որեւէ քննադատութիւն ունինք, այդ պէտք է ուղղուի միայն ու միայն ՀԲԸՄի:

Վերեւ յիշուած Մելգոնեանի «ենթադրեալ» թերութիւնները քանիցս կրկնուած են Մելգոնեանը քանդել ուզողներու կողմէ, եւ բազմաթիւ առիթներով ալ անոնք ձաղկուած են խորհմաց անձերու կողմէ զանազան հրատարակութիւններու մէջ: Կը զարմանանք որ այդ անհեթեթ կամ անհիմն գաղափարները տակաւին կը կրկնուին, առանց նկատի առնելու որ ժողովուրդը այլեւս կը գիտակցի իրողութեան, եւ ինքզինք նախատուած կը զգայ երբ նոյն վարկաբեկուած գաղափարները առաջ կը քշուին կրկին ու կրկին: